

Quincy

U.S. Army 1913

891.99
9-28

1913

9/11

19 NOV 2011

Մ. ՄԵՍՐՈՊԻ ՏԵՍԻԼԵԸ



Կ. Տ. Կ. Կ. Կ. Կ. Կ.

891.99  
2-28

ԿՐԹՆԵՐ ԳՆԱԲԱՆՆԵՐ

ՏՄ. ԱՐԱՔՍ

Կ ՊՈԼԻՍ 1913

3395

891.99

9-28

ԱՄ

# Ա. ՄԵՍՐՈՊԻ ՏԵՍԻԼՔԸ

Գրեց

ՎՏԱՐԱՆԴԻ

(ԱՐԱՄ ԶԱՐԸԳ)

38150



ՏՊԱՐԱՆ «ԱՐԱՄ»

Կ. ՊՈԼԻՍ, 1913

16 JUL 2013

48727

891.99

Ք-28

# Ա. ՄԵՍՐՈՊԻ ՏԵՍԻԼՔԸ

— «Մեծուքացեալ հազոյն աչաց բարձեռին աջոյ՝ գրեով ի վերայ վիմին» —  
ԽՈՐԵՆԱՏԻ

Ու հուիրական մեծաւորը ասպնջական մեծաստամներուն մաքրակրօն ու հայրեմի աղբիւրներուն պայծառ,  
Շանթակորդ բազուկները դէպի ամպրոպները դժոխանեո, և ականջները բնութեան ձայներուն ըլլաբարբառ,  
Կ'արտօսէր իր հոգիին մէջ, փոթորկոտօրէն խռովեալ, հողեղէնի կեանքին հետ անոր կարողութիւնը եղկելիօրէն եզերափակ,  
Մարդկային մտածումին ու անուրջին անձայրածիր անհուններուն քով անճառ...

Սակայն իր կուրծքին տակ գեղեցիկ հրդեհը անընկճելի ու աստուածային կամքին՝ Մեծիկական մոխիրներուն սպիտակ պատանքները թօթափած՝ իր բոցերը վիշապախոխ վարագուրեղ աչքերուն մէջէն, որոնք բոյր պատուհաններու հանգոյն դէպի արարչութիւնը կը բացուէին,  
Դէպի վեր, դէպի ոլորտը կը շանթէր, ուր լուսեղէն ցայտածուլերն են յաւերժագոյ կեանքին անթառամ...

Ու երբ այսպէս իր կամքը գերահրաշ կ'ամբառնար ու կը ծուլուէր տիեզերական Մարողջին, Խուցին աղջամուղջներուն մէջ, հողեղէնի շրթունքները սպիտոցեալ այսպէս կ'աղօթէին:

— «Վայրաբար քակեցի արեւին հետ անձամծիր, ու գիշերին հետ եղբայրաբար ի գուր հսկեցի,  
Ապարդիւն ունկնդրեցի ամպերուն ու աղբիւրներուն, հողմերուն ու քարբառներուն կեանքանական աշխարհին,



1690-99

Անշահօրէն ցաթեցի աչքերուս ցորեկները տար ազգաց իմաստութեան կոթողներուն և յիշատակներուն զիշերախառն ճակատներուն, եւ, աւա՛ղ, ձեռքերս անզօր. անզլատօրէն թերթեցիմ մատեանները պերհարարատ ժողովրդոց դարևոր հանճարին...

Սուգ հագան մայրերը մանկտիներուն հետ. ու տատրակներու հանգոյն որբեր կարդացիմ հայրենի աղբիւրներուն քով լալակարկաչ, Աղջկունք երամ առ երամ ծաղկակոխ չըրին դաշտերը, և հարսերը առագաստներուն մէջ քուրծիր հագան.

Կրօնատրոնները մերժեցիմ տաճարներուն մէջ ընթեռնուլ նուիրական մատեանները այլաբարբառ,

Իսկ ժողովուրդը ծուփ ի ծուփ փակեալ սրբատեղեաց դուռները քարկոծեց՝ պահանջելով հայ մատեանը աստուածային խօսքին...

Ու ես վաստակարեկ ու յուսակորոյս, վերստին փնտոցի մեմութիւնը խաղաղական խոցիս ճգնութեան

Եւ հոն, ըղծացի յօժարական ու տարփօրէն ըմպել մահին սև գինին՝ հողեղէնի պարտեալ անզօրութենէս խորապէս տրտմեալ...

Սակայն, երբ իրիկնացող մտածումիս հորիզոններուն վրայ համազգիներուս բազմամբոխ թափօրհներուն ամպրոպուլիւմ զգացի,

Եւ ուղեղիս մէջ անարկուօրէն արծազանքեց անոնց աղաղակը երկրացունց, փլուզող ծովերուն այնքան նման...

Սթափած՝ բազուկներս դէպի արշալոյսի հուրքերը նիզակեցի, և կեանքին բաժակը յափտեմական աղբիւրէն լեցնելով՝

Շրթունքներուս մօտեցուցի, որոնք մահին դալկութիւնը մերկացած՝ ապրելու և տքնելու երդումս սրբագործեցիմ.

Եւ այդ վայրկեանէն ուխտեցի միմչև աստղերդ քալել, կեքտելու համար հայ նշանագրերը քովամղուկ ապառնիներուն համար:

Զի քաջ գիտեմ, թէ Զարմը Հայկեան հողի կեանքին արշալոյսներուն հետ՝ Բու շունչովդ փոշիներէն յառած՝

Կոչեցեալ է իր ազատամարտ ու իմացական սերունդներն ընծիւղելու միմչև մայրամուտը, մայրամուտը վերջիմ արևին...

— «Բայց ամզիր ու ամմատեան, պիտի մնայ յաւերժ ծառայ իմացականութեանը սնապարծ օտարին,

Եւ անխուսափելիօրէն, անդիմարեկիօրէն ու անդառնալիօրէն պիտի հալուի, որպէս ձիւնը՝ ցեղերուն մէջ տարաբարբառ:

Ու դեռ ապառնիներէն վերադարձող մարգարէի հոգիս կը յայտնէ մահագուժօրէն, թէ ամագորոյն ու խուժանական ցեղերու ահասարսափ վոհմակները խորշակներուն պէս թունաւոր՝

Դարերով պիտի գամ չորս հողմերու բերաններէն և տնցնին հայ աշխարհէն...

Քար քարի վրայ չը պիտի մնայ, ու ամէն ճամբայ և ամէն անցք արլիւն խմելով՝ հողերը կարմիր պիտի ներկուին...

Եւ սակայն թափած արիւնէն ու գոյապայքարի դիակնաբուրգերէն չէ որ պիտի անհետանայ Ցեղը Հայկազան.

Այլ առիւծները պիտի սանձուին և թևազուրկ դառնան ամպաչու արծուիք, օտարամուտ բարբառէն ու բարքէն:

Զի լեզուն հոգին է ազգութեան, վահանը ցեղապաշտպանութեան և աղամանդեայ բանալին բանականութեան,

Օրհմեալ հացն է սերունդներուն, կշիռը լուսաւորութեան և սրբազան դրօշը ուրոյն գոյութեան...

Եւ արիւնի մրրիկներուն մէջէն շարունակ քալելով՝ ազգս հայ կուզէ մնալ, հայ կուզէ սուրիլ և որպէս հայ մեռնիլ.

Իսկ երազական է այս առանց գրաւոր բարբառին, ինչպէս մարմինին կեանքը առանց հոգիին...

Փարսօ՛ւ է հայը մայրենի հողին, որպէս ուխտաւորը մոլեռանդ սրբատեղեաց հրամայականօրէն նուիրական.

Ծաղկունքն իր ժպիտն են, աղբերքն իր երգը, սօսիւնքն իր երազը և սրտոներն իր կամփր շանթավէժ.

Իսկ լեռներն հպարտ, լեռներն անմատոյց և սառցակատար, տխտանահասակ խորհրդանշանքն են անսուտ, անվախճան ուրոյն գոյութեան...

Արդ, Հայն իր լեզուով կուզէ քարոզել խօսքն աստուածային, առեղծուածային ճակատագիրը կեանքի էութեան մեկնել մարդկութեան...

Բանականութեան ճերմակ արծուիքը կը ճախրեն հայ մանկտիներու լուսազարդ մտածումներուն մէջ արգասաւոր,

Եւ ամոնց սև աչուկները աստղերուլ յառած՝ տիեզերքի առեղծուածը կարդալ կը ճգնին գիտակցութեան օրէն,

Ու որքա՞ն խանձարուրներ կան հայ երդիրներուն տակ, ուր վաղորդայնի հսկաները իրենց մանկական նիրհը կը քնանան,

Եւ որքա՞ն բազուկներ ապառաժներու մէջ մխրճուած՝ ուր ոսկի հունձքի ցորեանները կը ցանեն, արիւնը քրտինքին խառնած:

Հայ ցեղը ռահվիրան է մարդկային մտածումի անապատներուն, և անձնուրաց տապա- նակակիրը առաքինութեանց ուխտին,

Անոր մեծ զաւակունքը վարդազոյն ցայտաղբիւրները պիտի ըլլան իտէալի պարտէզներուն, Ուր մեծապանծ ազգերը իրենց փառքի դամբաններուն մէջ առիւծորդիները քուն պիտի դնեն...

Ան պիտի ընթանայ, դարերու արիւններուն և հրդեհներուն մէջէն, միշտ անընկճելի դէպի վսեմացումը,

Եւ իր արիւնէն պիտի արմատանան ու ուռճանան անտառները հսկայայան կաղնիներու ամրակուռ բանականութեան.

Ան հոն պիտի ըլլայ միշտ, ուր իրաւունքն ու արդարութիւնը կը մարթունան,

Եւ պիտի դաստիարակէ բռնատրոնները վայրագ, կառափնատներուն վրայ վերջալոյսի մը խաղաղութեամբ մեռնելով...

Ազգերը գայն պիտի տեսնեն միշտ ոտքի, միշտ պայքարի պատնէշներուն վրայ և միշտ աննահանջ,

Պատմութիւնը իր փառապանծ էջերը պիտի բանայ հայորդիներու գերբնական ճիգերուն առջև.

Եւ հիմաւորց հողը իր եօթը խաւերուն մէջ պիտի ցնծայ մայրական հպարտութեամբ.

Եւ բովանդակ մարդկութիւնը օր մը միահամուռօրէն հայ ցեղին առաջ ծունկի եկած՝ Երկիւղածօրէն գայն իր սուսզը պիտի դաւանի, որպէս բիւրեղացումը մարդկային կո- բովին ու ընդունակութեանց...

Եւ այդ օրը բոլոր յախտեաններու համար՝

Հանուր ազգերու ասհմանները խաղաղութեան թաւ ձիթեհիներով պիտի անտառուին հայէն...

— « Եղո՞ւկ ինձի, սակայն, եօթն ամգամ եղուկ, զի ամզօր են ձեռքերս և մտածումս ամուլ...

Ուստի և ներէ ինձ Տէրդ տէրանց և Թագաւորդ թագաւորաց, որ մարդկային կարողու- թիւնէն այլևս ձեռնի՞թափ.

Հողեղէնի նայուածքս աստղային սանդուխէդ քեզի ամբարձուցած՝

Հոգիին հացը պահանջեմ հայ ցեղին ամուլունով, զոր կոչած ես սրպէս որմնաղիւր խա- դաղութեան տաճարներուն...

Փայլակներովդ դրօշմէ մտածումիս մէջ ձեւերը նշանագրերուն հայկազեան,

Եւ շանթահարած, նետէ զիս մահին խաւարներուն մէջ, երբ ձեւերը կեանքին իմ յանձ- նած...

(Խոր յուրիւն կը ճիւղէ քանի մը վայրկեան)

— « Դուն, որ Տէրն ես աստղային, հեռուներուն և Տէ՛րը գաղտնախորհուրդ անդունդներուն անխմանալի,

Քեզի կը հնազանդեն լուսահրդեն կարաւանները արևներուն և մեռելական զիշերները մահու խաւարներուն.

Դո՛ւն սկիզբն ու գոյասլատճառը կեանքին ու մահին, դուն սահմանողը ճակատագիրները աշխարհներուն,

Դո՛ւն սերմնացանը բանականութեան և անմիւթ ճարտարապետը տիեզերքի զարմանա- հրաշ աստղախորանին,

Լսէ՛ ինձի, կորսուա՞ծ և աննշան փոշիիս, որ աստղերուդ պայծառութեան տակ ծունկի եկած բոլորամուկը.

Անօգական, յուսահատ և մահամերձ զաւկի մը իրաւունքով շնորհդ կը պաղատի...

Ղրկէ կայծ մը Քու տիեզերածաւալ հրդեհէդ իմացականութեան և լուսաւորէ՛ մտածումս մթնած...

(Դարձեալ սպասողական խոր յուրիւն)

Ահա կը մօտեմայ այզը ուր արշալոյսիդ, և աշխարհը կը նիրհէ անդունդի ծայրին վա- դորդայնի պատրանքովն արբշիւ,

Եւ ես մեծաւորս, միայն կամ արթուն, որ զիշերն ի բուն գերեզմանիս քով հսկումի կեցած Քեզի կ'աղօթեմ...

Ս. ՄԵՍՐՈՊԻ ՏԵՍԻԼՔԸ

Իմ աղօթքը աղօթքն է բիւրերուն, աղօթքն է Հայ աշխարհին և աղօթքը ապառնի դա-  
րերուն,

Ես զարհուրանքով կ'առնեմ ձայնը մեռելներուն, որ հողին խաւարներէն ինծի հետ  
միասին կ'աղօթեն...

Հայ ազգն է որ յաւիտենականութեան համար պիտի վերածնի այս գիշեր, արևքի ծի-  
րանի հրդեհներէն առաջ,

Եւ անցեալ ու ապառնի դարերն ինծի հետ Յայտնութեանդ կ'սպասեմ ակնդէլ...

(Փայլակի յոյս մը կը խազէ նշանակագրերը)

6 Հոկտեմբեր 1913  
ՕՐԹ.Ա.ԲԷՕՅ







ՀՀ Ազգային գրադարան



NL0351766

48727